

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 800 – Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸԼԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	109.	«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2013 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային գուտ եկամտի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 11.04.2013թ. N 360-Ն որոշում:	
	110.	«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2013 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 17.10.13թ. N 1184-Ն որոշում:	
	111.	«Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ենթակառուցվածքի կազմը, ձևավորումը, վարումը և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ենթակառուցվածքի կազմը, ձևավորումը, վարումը և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մեր 09.12.2013թ. N Ե/6.2/8380-13 գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն:	
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը	
	73.	ՀՀ գույքահարկի և հողի հարկի 2014-2016 թթ. հարկման բազաների ձևավորում	Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ՀՀ կառավարության 22.05.2003թ. թիվ 641-Ն որոշման հավելվածի 2.3 կետի ա) ենթակետի պահանջների համաձայն ա/թ հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնահատված շենքերի և շինությունների ամփոփ ցուցակները սեպտեմբերի 1-ին և 19.04.2007թ. թիվ 465-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների համաձայն ա/թ հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնահատված հողամասերի ամփոփ ցուցակները օգոստոսի 1-ին տրամադրվել են Հայաստանի Հանրապետության համայնքներին:	
	74.	WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքներ	Կատարվել են ժամանակացույցով սահմանված հետևյալ աշխատանքները՝ - 2 տեխնիկական նախագծերի կազմում. - 7800 սահմանանիշերի դաշտային դիտարկումների հիման վրա շրջադարձային կետերի որոշում, նշահարում, ուրվագծերի կազմում, կոորդինատների որոշում. - 7800 սահմանանիշերի մշակում, հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում և կատարողականների կազմում. - 175 կադաստրային և համայնքների վարչական սահմանների քարտեզների համադրում. - 2 տեխնիկական հաշվետվության կազմում:	
	75.	Բազային երկրատեղեկատվական համակարգերի ստեղծում Գյումրի քաղաքում (817.3 հա)	Կատարվել են ժամանակացույցով սահմանված հետևյալ աշխատանքները՝ -տեխնիկական նախագծի կազմում. -Գյումրի քաղաքի 817.3 հա անճշտությունների հանութագրման և թարմացման, ինչպես նաև 817.3 հա ստորգետնյա մայրուղային հաղորդակցողիների հանութագրման խիտ կառուցապատ տարածքներում: Թվայնացվել է 817.3 հա տարածք: Ստեղծվել են բազային ԵՏՀ-ի համար 13076.8 /հա-շերտ/ այդ տարածքների վրա և մուտքագրվել է 81730 տարր տվյալների բազա:	
	76.	Հայաստանի Հանրապետությունում մշտական գործող ԶԻՊԻԷս (գլոբալ	Հանրապետության 12 բնակավայրերում տեղակայված բոլոր ռեֆերենց կայանները կապակցվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ	

		<p>դիրքորոշման համակարգ) GPS ռեֆերենց կայանների ցանցի ստեղծում</p>	<p>գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի <<Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն>> ստորաբաժանումում գործող վերահսկիչ-հաշվարկային կենտրոնի հետ:</p> <p>Ստեղծված ցանցի ճշգրիտ հավասարակշռման նպատակով՝ վերադիտարկվել են Հայաստանի Հանրապետության Ազգային գեոդեզիական ցանցի 0- դասի գեոդեզիական բոլոր կետերը:</p> <p>Հայաստանի տեղադիրքի որոշման համակարգը (ARMPOS) արդեն իսկ ներդրված է և այն ապահովում է GPS, ГЛОНАСС արբանյակային համակարգերից ստացված համապատասխան ազդանշանների հիման վրա բարձր ճշտությամբ որոշվող ցանկացած կետի կոորդինատները հանրապետության ողջ տարածքում: Ցանցը ներկայումս փորձնական շահագործվում է միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, իսկ համապատասխան փորձարկումից հետո կհանձնվի վերջնական օգտագործման:</p>	
--	--	--	---	--